# ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ԳԻՐԸ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԲԱԴԱԼՅԱՆԻ ՄԱՀՎԱՆ ԱՌԻԹՈՎ

## ՍԳԱԿԻՐ ԲԱԴԱԼՅԱՆ ԸՆՏԱՆԻՔԻՆ

Ցավով և ափսոսանքով լսեցինք մեծանուն երգիչ, մեր Եկեղեցու արժանավոր զավակ Հովհաննես Բադալյանի մահվան մասին: Հանուն Ամենայն Հայոց Կաթողիկոսության, Գերագույն Հոգևոր Խորհրդի և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանության՝ անդարձ կորստի այս դժվարին պահին ցավակցում ենք հանգուցյալի բոլոր հարազատներին ու մերձավորներին:

Հայ երգարվեստի անկեղծ նվիրյալն էր երջանկահիշատակ Հովհաննես Բադալյանը: Նրա բարձրարվեստ կատարմամբ հայ ժողովրդական և աշուղական երգը տասնամյակներ շարունակ ջերմացրել է հազարավոր հայորդյաց հոգիները: Նրա հայրենաբույր և հոգեթով երգը հնչել է նաև Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում՝ Վեհարանի կամարներից ներս, գերելով բոլորիս և անմոռաց մնալով մեր հիշողության մեջ:

Մեր աղոթքն է, որ Բազումողորմն Աստված երկնային երանավետ Իր բարձունքներում խաղաղության մեջ ընդունի հանգուցյալ Հովհաննես Բադալյանի հոգին և Սուրբ Հոգու շնորհով սփոփանք ու մխիթարություն պարգևի նրա բոլոր հարազատներին:

«Ցիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի»: Ամեն:

Վշտակցությամբ և աղոթքով՝

**ԳԱՐԵԳԻՆ Բ**
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
20 օգոստոսի 2001 թ.